ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

1964 թ. նոյեմբերի 26-ին կայացավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական նստաշրջանը՝ նվիրված բազմավաստակ հայագետ Երվանդ Լալայանի *ծննդյան 100-ամյակին։*

Ներածական խոսքով նստաշրջանը բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Գ. Ներսիսյանը։ Նա ընդգծեց խոշոր ազգագրագետի, հնագետի, բանագետի կատարած բազմարեղուն գործունեությունը, այն խոշոր ավանդը, որ ներդրել է նա հայագիտության մեջ։

Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Կ. Գ. Ղաֆադարյանը զեկուցեց Ե. Լալայանի կյանքի ու գործունեության մասին։ Համառոտակի ուրվագծելով Ե. Լալայանի կյանքի ուղին, զեկուցողը հանգամանորեն վերլուծեց նրա գիտական գործունեությունը։ Մեծ է եղել Լալայանի վաստակը հնագիտության բնագավառում։ Ազգագրական աշխատանքին զուգահեռ, նա բազմաթիվ պեղումներ է կատարել Հայաստանում և նրա սահմաններից դուրս։ Այդ մասին է վկայում նրա «Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում» գիրքը, որը հրատարակվել է 1931 թ.։ Նա իր ուսումնասիրությունների մեջ նկարագրել է բազմաթիվ հուշարձաններ և վերծանել վիմագիր արձանագրություններ. հրատարակել է երեք ստվարածավալ ալբոմ՝ նվիրված Վայոց ձորի, Վասպուրականի և Նոր-Բայազետի գավառների հուշարձաններին։ Զբաղվել է նաև հուշարձանների պահպանման հարցերով։

Պատմական գիտությունների թեկնածու Կ. Վ. Մելիք-Փաշայանը զեկուցեց ականավոր գիտնականի ազգագրական գործունեության մասին։ Նա առաջինն էր, որ գիտական հիմքերի վրա դրեց ազգագրական նյութերի հավաքումը և իր գործունեությամբ նպաստեց ազգագրությունը որպես գիտություն ձևավորելու խնդրին։ Ազգագրական գիտության պրոպագանդման գործում մեծ աշխատանք է ծավալել Լալայանը՝ կազմակերպելով դասախոսություններ և զեկուցումներ։

Բազմավաստակ հայագետի բեղմնավոր գործունեության հանրագումարը հանդիսացան «Ազգագրական հանդեսի» 26 հատորները, որոնք հրատարակվեցին 20 տարում։ Հանդեսի շուրջն էին համախմբված Մ. Արեղյանը, Թ. Թորամանյանը, Հ. Աճառյանը, Լեոն, Լ. Մելիքսեթ-Բեկը, Ս. Լիսիցյանը, Ս. Շահազիզը, Ա. Ջելինսկին, Կարա-Մուրզան և ուրիշներ։

«Ազգագրական հանդեսը» առաջին գիտական բնույթի հանդեսն էր հայ իրականության մեջ։ Շուրջ կեսդարյա գործունեության ընթացքում Ե. Լալայանը հրատարակեց 70-ից ավելի արժեքավոր աշխատություններ։

Ե. Լալայանի բանագիտական-բանահավաքչական գործունեությանն էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մ. Նագինյանի զեկուցումը։ Ե. Լալայանը ժողովրդական բանահյուսությունը դիտում էր որպես ազգագրության մի անբաժանելի օղակը և իր ազգագրական աշխատանքների մեջ մեծ տեղ էր հատկացնում բանահյուսական նյութերին։ Հայկական բանահյուսության մեծարժեք գործերից է Ե. Լալայանի «Մարգարիտներ հայ բանահյուսության» ժողովածուն (երեք հատոր)։ Այն համարվում է մեր հեքիաթագրության ամենածավալուն հավաքածուն։ Երկու գրքերը պարունակում են Արարատյան դաշտի հեքիաթները, երրորդ գրքում զետեղված են Ապարանում վերարնակված արևմտահայերի մի շարք հեքիաթներ։ Ե. Լալայանի ժառանգության մեջ հաշվվում է շուրջ 1000 անուն հեքիաթ։ Կարևոր արժեք են ներկայացնում նրա գրի առած և հրատարակված «Սասնա ծռերը» վեպի Նոր-Բայազետի, Վանի, Ալաշկերտի պատումները։ Ե. Լալայանը իր ժողոված բանահյուսական նյութերը հրատարակել է նաև առանձին գրքերով, ինչպիսին է «Չավախքի բուրմունքը» ժողովածուն և այլն։ Ժողովածուում տեղ են գտել սիրո, հարսանյաց, սգո, պանդիտության երգերը, ինչպես և ավանդությունները։ Ե. Լալայանը թողել է բանահյուսական վիթխարի ժառանգություն։ Նա հավաքել է բանահյուսության գրեթե բոլոր ժանրի նյութեր՝ առակներ, հանելուկներ, անեկդոտներ, աղոթքներ, ժողովրդական, վիպական և քնարական երգեր և

այլն։ Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակում է «Հայկական հեքիաթներ»-ի 10-ից ավելի հատորներ, որտեղ ընդգրկվում են Ե. Լալայանի հավաքած նյութերը։

Երվանդ Լալայանի մասին հետաքրքիր հուշեր պատմեցին գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը և Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը։

Լ. Գ.

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ

1964 թ. դեկտեմբերի 4-ին Սովետական Հայաստանի գիտական հասարակայնությունը նշեց խոշոր գիտնական, ակադեմիկոս, ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, քիմիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Արմենակ Լևոնի Մնջոյանի ծննդյան 60-ամյա և գիտա-մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանը։

Ակադեմիկոս Մնջոյանի կյանքի և գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ քիմիական գիտությունների թեկնածու Հ. Ա. Հարոյանը։

Հարուստ և ուսանելի կյանքի ուղի է անցել հոբելյարը։ Նա ծնվել է 1904 թ. Ղարսի նահանգի Սարիղամիշ գյուղաքաղաքում՝ արհեստավորի ընտանիքում։ Առաջին համաշխարհային պատերազմը ստիպել է Մնջոյանների ողջ ընտանիքին թողնել հայրենիքը և տեղափոխվել Ալեքսանդրապոլ (այժմյան Լենինական), որտեղ պատանի Մնջոյանը աշխատանքի է անցել գեղատանը՝ որպես աշակերտ։

1933 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը, իսկ 1930 թ. Մոսկվայի քիմիո-ֆարմացևտիկ ինստիտուտը, Ա. Լ. Մնջոյանը իր ողջ գիտական գործունեությունը ծավալել է այդ երկու ուղղությունների շփման հատվածում՝ դեղագործական քիմիայի ասպարեզում։

Ա. Լ. Մնջոյանի նախնական գիտական աշխատանքները նվիրված են Հայաստանի բուսական ու հանքային հումքի և նրանցից անջատվող դեղամիջոցների ուսումնասիրմանը։ Հետագայում նա անցնում է ավելի լայն և ժամանակակից հետազոտությունների, որոնց հիմնական նպատակն էր ուսումնասիրել օրգանական միացությունների քիմիական կառուցվածքի և նրանց բիոլոգիական ազդեցության միջև եղած կապը։

1937 թ. Ա. Լ. Մնջոյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա «Հայաստանի այրվող թերթաքարերը և նրանց կիրառությունը բժշկության մեջ» թեմայով, իսկ 1944 թ. դոկտորական դիսերտացիա՝ «Նյութեր տեղական անդգայնացնող միջոցների սինթեզի վերաբերյալ» վերնագրով։ 1950 թ. նա ընտրվում է ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, իսկ 1953 թ.՝ ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ։

Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի գեկավարած ՀՍՍՌ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում խոշոր աշխատանքներ են տարվում հայրենական նոր դեղամիջոցներ ստեղծելու ուղղությամբ։ Ինստիտուտում նրա գեկավարությամբ սինթեզված շատ պրեպարատներ արդեն կիրառվում են բժշկական պրակտիկայում և լայն ճանաչում են գտել ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս։

Արմենակ Մնջոյանի գրչին են պատկանում մոտ 200 գիտական աշխատանքներ։ Նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ լույս է ընծայվում «Հետերոցիկլիկ միացությունների սինթեզները» ժողովածուն, որի արդեն հրատարակված պրակները արժանացել են սովետական և արտասահմանյան գիտնականների ուշադրությանը։

Երկար տարիներ Ա. Լ. Մնջոյանը գեկավարել է Գիտական համալսարանի և Բժշկական ինստիտուտի օրգանական քիմիայի ամբիոնները։ Գիտա-մանկավարժական գործունեության